ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2634-Ա « 21 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՇԻՐԱԿԻ ՓՈՂՈՑ Հ.26 ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արտաշես Մարգարյանի դիմումը՝ Շենգավիթ վ/շ Շիրակի փողոց հ.26 շինություն հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հողամասի համար հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15012026-01-0008 վկայականը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2026 թվականի ապրիլի 14-ի հ.ԴԳ-3234, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի 2026 թվականի ապրիլի 14-ի հ.ՄՇ/11503, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2026 թվականի ապրիլի 6-ի հ.53/53.13/2226-2026, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 2026 թվականի ապրիլի 3-ի հ.860/26-1 (նշված տարածքում առկա են Ընկերությանը պատկանող ենթակառուցվածքներ: Աշխատանքների կատարման ժամանակ պարտադիր է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի աշխատակցի ներկայությունը) գրությունները, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2026 թվականի ապրիլի 10-ի հ.ԱՏ-10042026-01-1494 տեղեկանքը, «Դավիթ Մովսեսյան» ԱՁ-ի կողմից կազմված չափագրությունը և եզրակացությունը՝ հողամասում առկա շինությունները քանդված լինելու վերաբերյալ:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Շիրակի փողոց հ.26 շինություն հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 818.60քմ, որը համապատասխանում է կադաստրային քարտեզում ամրագրված հողամասի մակերեսի հետ, իսկ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում ամրագրված հողամասի մակերեսը կազմում է 818.70քմ, ինչպես նաև առկա է հողամասի տեղադիրքի շեղում:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածի համաձայն՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 7-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության եզրակացությունը.

1. Շենգավիթ վ/շ Շիրակի փողոց հ.26 շինություն հասցեում գտնվող 818.60քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Շենգավիթ վ/շ Շիրակի փողոց հ.26 շինություն հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Արտաշես Մարգարյանին պատկանող 818.60քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246